ՏԻՐՈՋ ԼԵՌԸ ՆՐԱ ՏԵՍԻԼՔԸ

Լեռները շատ կարևոր դեր են խաղում Աստվածաշնչում և՛ բառացի, և՛ խորհրդանշական իմաստով: Նրանք հաճախ պատկերվում են որպես աստվածային հանդիպման, հայտնության և ուխտի վայրեր Աստծո և մարդկության միջև:

Սինա լեռը (Քորեբ).

Այն վայրը, որտեղ Աստված հայտնեց Մովսեսին տասը պատվիրանները՝ ուխտ հաստատելով Իսրայելի հետ:

Սիոն լեռը.

Երուսաղեմի քաղաքը, որը ներկայացնում է Աստծո քաղաքը և Տիրոջ բնակության վայրը:

Կարմեղոս լեռը.

Եղիայի բախման վայրը Բահաղի մարգարեների հետ, որը ներկայացնում է Աստծո զորությունը կեղծ աստվածների վրա:

Թաբոր լեռը.

Հիսուսի այլակերպության վայրը՝ բացահայտելով իր աստվածային փառքը իր աշակերտներին:

Գողգոթա լեռը.

Այն վայրն է, որտեղ Հիսուսին խաչեցին:

Ձիթենյաց լեռը.

Նշանավոր վայր Երուսաղեմում, որտեղ Հիսուսն աղոթեց և համբարձվեց երկինք:

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. 2 ՕՐԻՆԱՑ 34:1-5

*1 Մովսեսը Մովաբի դաշտերից բարձրացավ Նաբավ լեռը՝ Փասգայի գագաթը, որը գտնվում է Երիքովի դիմաց: Տերը նրան ցույց տվեց Գաղաադի ամբողջ երկիրը մինչև Դան, 2 նաև ամբողջ Նեփթաղիմը, Եփրեմի ու Մանասեի երկիրը և Հուդայի ամբողջ երկիրը մինչև արևմտյան ծովը, 3 հարավային կողմը, Երիքովի հովտի դաշտն ու Արմավենիների քաղաքը մինչև Սեգոր: 4 Տերն ասաց նրան. Սա է այն երկիրը, որի համար երդվեցի Աբրահամին, Իսահակին և Հակոբին՝ ասելով. "**<u>Քո սերնդին եմ տալու դա</u>**": Ահա քո աչքերով տեսնել տվեցի քեզ, բայց դու այնտեղ չես մտնի:*

> *Ծննդոց 15:18 – Այդ օրը Տերը Աբրամի հետ ուխտ դրեց՝ ասելով. Այս երկիրը՝ Եգիպտոսի գետից մինչև մեծ գետը, այսինքն՝ Եփրատ գետը, քո սերնդին եմ տալիս.*

2 Կոր. 1:20 - Որովհետեւ որքան Աստուծոյ խոստմունքներ որ կան՝ նորանում է այոն, եւ նորանում է ամենը Աստուծո փառքի համար մեզանով:

Միքիա 4:2 – ...Եկե՛ք բարձրանանք Տիրոջ լեռը և Հակոբի Աստծու տունը...

I. ԱՍՏՎԱԾ ՀԱՅՏՆՈՒՄ Է ԻՐ ՏԵՍԻԼՔԸ ԲԱՐՁՐ ՎԱՅՐԵՐԻՑ:

1 Մովսեսը Մովաբի դաշտերից բարձրացավ Նաբավ լեռը՝ Փասգայի գագաթը

- ***Աստվածաշունչն արձանագրում է, որ Աստված առնվազն ինը անգամ հայտնվեց Մովսեսին և Մովսեսը մոտ ութ անգամ բարձրացավ Սինա լեռը, որպեսզի հանդիպի Տիրոջը:***

Տերը նրան ցույց տվեց...

- ***Ի՞նչ է Աստված ցույց տալիս ձեզ 2025թ.***

  Ամբակում 2:2-3 Տերն ինձ պատասխան տվեց և ասաց. Գրի՛ր տեսիլքը... սպասի՛ր նրան, որովհետև անպատճառ պիտի գա և չի ուշանա:

- ***Որքա՞ն հեռու կարող եք տեսնել:***

Աստծո տեսիլքը տեսնում է ոչ միայն այն, ինչ եղել է անցյալում և այն, ինչ ներկա է, Աստծո տեսիլքը կարող է տեսնել ապագայի կատարած խոստումները:

Տերը նրան ցույց տվեց Գաղաադի ամբողջ երկիրը մինչև Դան, 2 նաև ամբողջ Նեփթաղիմը, Եփրեմի ու Մանասեի երկիրը և Հուդայի ամբողջ երկիրը մինչև արևմտյան ծովը, 3 հարավային կողմը, Երիքովի հովտի դաշտն ու Արմավենիների քաղաքը մինչև Սեգոր:

II. ԱՍՏՎԱԾ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ Է ԻՐ ՏԵՍԻԼՔԸ ԵՐԿՆԱՅԻՆ (ԲԱՐՁՐ) ՎԱՅՐԵՐՈՒՄ:

Հայտ. 21:10 – Եվ ինձ Հոգով տարավ մի մեծ ու բարձր լեռ և ցույց տվեց ինձ սուրբ քաղաքը՝ Երուսաղեմը, որ իջնում էր երկնքից՝ Աստծու մոտից:

*Եփ. 2:6 - Նորա **հետ** մեզ հարություն տվեց, եւ նորա **հետ** **երկնավորներում** նստեցրեց՝ Քրիստոս Յիսուսում:*

- ***Այժմ ես կխնդրեմ ձեզ հավատքով բարձրանալ Գողգոթա լեռը:***

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: